ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՑ ԳՐՔԵՐ

Հինգերորդ հաղորդում

Պատերազմ ամաղեկացիների դեմ

Գրվածքների ընթերցում. Ա Թգ 15, Ելց 17:8-13, Գղտ 5:16-17, 24

I. Ա Թգ 15-րդ գլուխը պատում է այն մասին, որ Սավուղն անհնազանդություն ցուցաբերեց ամաղեկացիներին հաղթելիս.

Ա. Նա հաղթեց թշնամուն, բայց բոլորովին անհնազանդ էր Աստծուն՝ խխ. 7-9:

Բ. Այստեղ Սավուղը բացարձակապես և ամբողջությամբ մերկացվեց, այնուհետև Աստված, ինչպես նաև Սամուելը, հրաժարվեցին նրանից՝ խխ. 14-26:

Գ. Այս գլուխը մեզ համար կարևոր դաս է պարունակում, որը մենք պետք է յուրացնենք այսօր:

II. Ըստ նախատիպերի՝ ամաղեկացիները խորհրդապատկերում են մսեղին՝ ընկած մարդուն՝ Ելց 17:8-16.

Ա. Ամաղեկը՝ մսեղին, մեզ Տիրոջ հետ առաջ գնալու հարցում խանգարող գլխավոր թշնամին է՝ խ. 8, Երկ Օր 25:17-18.

1. Ամաղեկ անունը նշանակում է «ռազմատենչ», ինչը ցույց է տալիս, որ մսեղին ռազմատենչ է, կործանարար և անհանգստացնող:
2. Քրիստոնեական կյանքի ամենամեծ կործանիչը մսեղին է՝ Ա Պտ 2:11:
3. Այն փաստը, որ Աստված շարունակական պատերազմ է մղում Ամաղեկի դեմ, բացահայտում է, որ Աստված ատում է մսեղին և ուզում է բնաջնջել այն՝ Ելց 17:16, Գղտ 5:17:

Բ. Մսեղին խորհրդապատկերում է ընկած հին մարդու ամբողջությունը, մեր ողջ ընկած էությունը՝ Ծնդ 6:3, Հռմ 7:18ա, Գղտ 2:16.

1. Մսեղին հին մարդու դրսևորումն է մեր ապրելակերպում և դրա արտահայտությունն է՝ Հռմ 6:6:
2. Մսեղին թշնամություն է Աստծու դեմ, մսեղին չի ենթարկվում Աստծու օրենքին, և մսեղին ի վիճակի չէ ենթարկվելու Աստծու օրենքին՝ 8:7:

Գ. Մսեղին Աստծու թշնամու բանակատեղն է և նրա աշխատանքի ամենամեծ ռազմահենադաշտը՝ Գղտ 5:19-21.

1. Ողջ տիեզերքում Աստծու եզակի թշնամին գործնական իմաստով ոչ թե Սատանան է, այլ մսեղին՝ Հռմ 8:7:
2. Մսեղին՝ ընկած մարդը, բացարձակապես մեկ է Սատանայի հետ, և Սատանան այն օգտագործում է՝ Աստծու դեմ մարտնչելու համար՝ Մտթ 16:23, Գղտ 5:17:
3. Մսեղին մեր թշնամիներից առաջինն է. այն առաջ է մեղքից, աշխարհից ու Սատանայից, որպեսզի մարտնչի մեր դեմ՝ Հռմ 8:3:
4. Աստված մսեղին ատում է այնպես, ինչպես Սատանային, և Նա

մսեղին ուզում է ոչնչացնել այնպես, ինչպես Սատանային՝ Ելց 17:16, Երկ Օր 25:17-19, Ա Թգ 15:2-3:

Դ. Ամաղեկի պարագայում Տիրոջ գահի դեմ ձեռք կա՝ Ելց 17:16, Ա Թգ 15:22-23.

1. Ամաղեկը փորձեց տապալել Աստծու գահը, ինչպես Սատանան էր մի անգամ փորձել՝ Ելց 17:8, 16:
2. Մսեղին, ինչպես Սատանան ինքը, դիմակայում է Աստծու իշխանությանը՝ Եսյ 14:12-14.
   ա. Մսեղին ապստամբում է Աստծու դեմ և Նրա գահի դեմ:
   բ. Մսեղին դիմակայում է այն ամենին, ինչ Աստված անում է Իր կառավարման մեջ:
3. Մեր մսեղին Աստծու իշխանության թշնամին է և ապստամբում է Աստծու կառավարական ղեկավարման դեմ.
   ա. Մսեղին չափազանց այլանդակ է, որովհետև այն դեմ է Աստծու գահին, ղեկավարմանը և ծրագրին՝ Հյտ 4:2, 5:6, Եփս 3:11:
   բ. Մեր մսեղիի յուրաքանչյուր տեսանկյուն, լինի բարի, թե չար, Աստծու իշխանության թշնամի է:
   գ. Այն ամենը, ինչ մսեղիից է, դիմակայում է Աստծու գահին. Սատանան՝ նենգը, Աստծու թշնամին, մսեղին օգտագործում է՝ խանգարելու համար Աստծու մտահղացմանը՝ Բ Կրթ 2:11:

Ե. Մսեղին դեմ է թագավորմանը.

1. Որտեղ մսեղին է, այնտեղ Աստծու թագավորությունը չի կարող լինել:
2. Այդ պատճառով մսեղիին պետք է հիմնավորապես վերջ դնել նախքան Աստծու թագավորությունը կկարողանա գալ:

III. Ա Թգ 15:2-ում Եհովան հռչակեց, որ ամաղեկացիներին կպատժի այն ամենի համար, ինչ նրանք արեցին Իսրայելին, երբ մարտնչում էին Իսրայելի դեմ.

Ա. Ամաղեկը մարտնչեց Իսրայելի զավակների դեմ, երբ նրանք ճանապարհորդում էին Աստծու նպատակին հասնելու համար՝ Ելց 17:8-16, Ա Թգ 15:2-3.

1. Ամաղեկի հետ պատերազմելիս, որ նկարագրված է Ելց 17:8-16-ում, Մովսեսը, Աստծու գավազանը ձեռքին, կանգնեց բլրի գագաթին, իսկ Հեսուն ընտրյալ մարդկանց հետ դուրս եկավ պատերազմելու Ամաղեկի դեմ և հաղթելու նրան:
2. Մինչ Հեսուն մարտնչում էր, Մովսեսն աղոթում էր:
3. Այն բանից հետո, երբ Հեսուն հաղթեց Ամաղեկին, Աստված հռչակեց, որ «Ամաղեկի դեմ սերնդեսերունդ պատերազմելու է» (խ. 16). սա ցույց է տալիս, թե որքան լուրջ էր Աստված վերաբերվում ամաղեկացիների խանգարելուն:

Բ. Ելց 17:8-13-ը ցույց է տալիս, թե ինչպես մարտնչել Ամաղեկի դեմ.

1. Մենք Ամաղեկի դեմ մարտնչում ենք բարեխոսող Քրիստոսի և մարտնչող Հոգու շնորհիվ՝ Հռմ 8:34, Եբր 7:25, Գղտ 5:17.
   ա. Լեռան գագաթին իր ձեռքը բարձրացնող Մովսեսը երկինքներում բարեխոսող համբարձված Քրիստոսի նախատիպն է՝ Ելց 17:9, 11:
   բ. Ամաղեկի դեմ մարտնչող Հեսուն մսեղիի դեմ մարտնչող ներբնակվող Հոգու նախատիպն է՝ խխ. 9, 13:
   գ. Մենք պետք է բարեխոսող Քրիստոսի հետ միության մեջ լինենք, որպեսզի համագործակցենք մարտնչող Հոգու հետ՝ Կղս 3:1-3, 5, Հռմ 8:34, 13, Գղտ 5:24, 17:
2. Ամաղեկի դեմ պատերազմելիս մենք պետք է համագործակցենք Տիրոջ հետ՝ աղոթելով և մսեղին մահվան ենթարկելով՝ Ղկս 18:1, Ա Թսղ 5:17, Հռմ 8:13, Գղտ 5:24.
   ա. Երբ աղոթում ենք, մենք մեկ ենք բարեխոսող Քրիստոսի հետ՝ Հռմ 8:34:
   բ. Երբ մսեղին մահվան ենք մատնում, մենք մեկ ենք մարտնչող Հոգու հետ՝ Գղտ 5:17:
   գ. Մի կողմից՝ մենք պետք է աղոթենք Քրիստոսի հետ. մյուս կողմից՝ պետք է մարտնչող Հոգով սպանենք մսեղին՝ խ. 24:
   դ. Հին մարդուն խաչելը Աստծու պարտականությունն էր. մսեղին խաչելը մեր պարտականությունն է՝ 6:6, 8:13, Գղտ 5:24:

IV. Աստված պատվիրեց Սավուղին «հարվածել ամաղեկացիներին» և «ամբողջովին ոչնչացնել այն ամենը, ինչ նրանք ունեն» և չխնայել նրանց, բայց նա չհնազանդվեց Եհովայի պատվերին՝ Ա Թգ 15:3-9.

Ա. Սավուղը սպանեց ամաղեկացիներին, բայց խնայեց Ագագ թագավորին և ոչխարներից, եզներից, պարարտ կենդանիներից, գառներից լավագույնները և բոլոր լավ բաները՝ խխ. 7-9:

Բ. Այն, որ Սավուղը և ժողովուրդը խնայեցին այն բաների լավագույն մասը, որոնք պետք է իսպառ ոչնչացնեին, լուսաբանում է այն փաստը, որ փորձառության առումով մենք գնահատում ենք մեր մսեղիի լավ տեսանկյունները, մեր բնական կյանքը և չենք ցանկանում դրանք ոչնչացնել.
   1. Այն, ինչ մենք անում ենք առանց Աստծու շնորհքի, Նրանից կախված լինելու և Նրան ապավինելու, մսեղիից է՝ Փլպ 3:3-4:
   2. Մսեղիի ամեն տեսանկյուն, լինի բարի, թե չար, հակադրվում է շնորհքին և Աստծու թագավորությանը և մեզ հետ է պահում Քրիստոսին վայելելուց, հետևաբար մենք պետք է ատենք մսեղիի ամեն մի տեսանկյուն և մսեղին ոչնչացնելու հարցում բացարձակ լինենք՝ Հռմ 8:13, Գղտ 3:3, 5:2-4:

Գ. Աստված չէր ուզում, որ Սավուղն անասուններից լավագույնը որպես Իր համար զոհաբերություն օգտագործեր՝ Ա Թգ 15:15.

1. Աստծուն նվիրված և զոհաբերված ամեն բան, որի աղբյուրը մսեղին է, Նրա աչքին պիղծ է՝ խ. 19:
2. Աստծուն մեր կամքի համաձայն ինչ-որ բան մատուցելը հանդգնություն է և մեղսալի՝ Ծնդ 4:5, Մտթ 7:22-23:

V. Մեր սեփական կամքի համաձայն բարիք գործելն իրականում Աստծու գահի և Նրա տնտեսության դեմ ապստամբություն է՝ Ա Թգ 15:22-23, Ելց 17:16.

Ա. Սավուղի անհնազանդությունը նրան մերկացրեց որպես Աստծու դեմ ապստամբի և Աստծու թշնամու՝ Ա Թգ 22:17:

Բ. Սավուղը ծայրաստիճան ապստամբեց Աստծու դեմ. նա չենթարկվեց Աստծուն և Նրան չընդունեց որպես իր Թագավորի և Գլխի:

Գ. Նա ապստամբությամբ էր կազմված, որը նույնքան պիղծ է, որքան կուռքերին երկրպագելը՝ 15:23:

Դ. Սավուղի արածը նույնքան չար էր, որքան չար ոգու հետ շփվելը՝ այդ ոգու և ոչ թե Աստծու մտադրությունն իրականացնելու նպատակով՝ խ. 23:

Ե. Ցանկացած ապստամբություն կապված է հանդգնության հետ, այն բանի, որ մարդը համարձակվում է առանց Աստծու ինչ-որ բաներ անել:

VI. Սավուղը կորցրեց իր թագավորումը, քանի որ ամբողջովին չոչնչացրեց Ամաղեկին՝ խխ. 26, 28.

Ա. Եթե մենք մեր մսեղիին վերջ դնելու առումով բացարձակ չենք, ապա Սավուղի պես կկորցնենք մեր թագավորումը՝ Ա Պտ 2:9, Հյտ 1:6, 5:10:

Բ. Սավուղի անհնազանդության գրառումը նախազգուշացում է, որը ցույց է տալիս, որ մենք չպետք է Աստծու թագավորության մեջ որևէ բան մեր մսեղիով անենք. ամեն ինչում մենք պետք է խաչենք մեր մսեղին և հավատարմորեն վարժենք մեր հոգին, որպեսզի հետևենք Տիրոջը, ով մեր հոգում բնակվող կենդանարար, ավարտուն Հոգին է, և ով մեկ է մեզ հետ՝ Ա Կրթ 15:45, 6:17, Բ Տմթ 4:22, Գղտ 5:16, 25:

Գ. Երբ Ամաղեկին վերջ է դրվում, Աստծու թագավորությունն անմիջապես գալիս է՝ Ելց 18:1-26.

1. Աստծու թագավորությունը մատնանշում է Աստծու իշխանությունը, որի շնորհիվ ամեն ինչ հնազանդեցվում է Աստծուն՝ Մրկ 1:15, Հվի 3:3, 5, Հյտ 11:15, 12:10, Դնլ 2:44:
2. Քանի որ մսեղին դեմ է թագավորմանը, մսեղիին պետք է հիմնավորապես վերջ դնել, նախքան Աստծու թագավորությունը կկարողանա գալ՝ Ա Կրթ 6:9-10, Եփս 5:5:

Դ. Եթե մենք հետևենք Տիրոջ խոսքին և ամբողջությամբ ոչնչացնենք մսեղին և հոգու համաձայն ապրենք ու քայլենք, ապա կունենանք թագավորումը և կլինենք Աստծու թագավորությունում՝ Հռմ 8:4, 14:17, Գղտ 5:19-21, Բ Պտ 1:5-11:

© 2021 Living Stream Ministry